ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԱԿԱՆ–ՊՐԱԿՏԻԿ ՅՈՒՐԱՑՈՒՄԸ ԵՎ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

ՍՎԵՏԼԱՆԱ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ

Մեր ժամանակներում մեծապես աճել է գեղագիտական գործոնի դերն ու նշանակությունը թե՛ հոգևոր և թե՛ նյութական արտադրության ոլորտներում։ Գեղագիտական գործոնի կիրառելիության սահմանները որակապես ընդլայնվում են՝ իրենց մեջ ներառելով գիտությունը, արտադրությունը, մարդկանց կենցաղն ու նրանց կենսագործունեության մյուս բնագավառները։ Այդ օբյեկտիվ միտումը արդի հասարակական կյանքի հումանիզացման կարևոր ուղղություններից է և, Զ. Բեգենաուի պնդմամբ, բնորոշ է հասարակության զարգացման այն աստիճանին, երբ «գեղագիտականը գործնականում ոչ միայն մասսայաբար վերարտադրվում է որպես կյանքի իսկական հարստություն, այլև դառնում տնտեսական անհրաժեշտություն և սուբյեկտիվ պահանջմունքների օբյեկտ»[1]։

Գեղագիտականի ըմբռնումը որպես տնտեսական, սոցիալական պահանջմունք և անհրաժեշտություն, անշուշտ, միանգամայն նոր պատկերացում, խնդրի լուծման հնարավոր տարբերակների նոր մեկնաբանություն է առաջարկում արդի մարդկությանը։ Ինչ վերաբերում է գեղագիտականի նկատմամբ սուբյեկտիվ պահանջմունքներին, ապա գեղեցիկի ձգտումը դառնում է ժամանակակից մարդու իրական պահանջմունքներից մեկը, և միայն արվեստն այլևս անկարող է ամբողջովին բավարարել այն։ Մարդն իրեն շրջապատող միջավայրը նույնպես ձգտում է տեսնել կազմակերպված ոչ միայն ըստ օգտակարության, հարմարավետության, այլև ըստ գեղեցկության չափանիշների։ Այդ գործում մեծ է ճարտարապետության, կիրառական արվեստի և դիզայնի դերն ու նշանակությունը։ Նշելով ճարտարապետության, կիրառական արվեստի և դիզայնի դերը մարդու առարկայական միջավայրի գեղագիտականացման գործում՝ հարկ ենք համարում ընդգծել, որ դրանցով չի սահմանափակվում գեղեցիկի օրենքներով առարկայական միջավայրի կազմակերպման խնդիրը։

Անդրադառնալով մարդկային գործունեությանը՝ Կ. Մարքսը նշում է, որ այն իրականացվում է «նաև ըստ գեղեցկության օրենքների»։ Ընդսմին, Կ. Մարքսը նկատի ունի ոչ միայն արվեստը (լայն իմաստով՝ հոգևոր ոլորտը), ոչ միայն նյութական պրակտիկ գործունեության առանձին տեսակները, այլև «իսկական» մարդկային աշխատանքային գործունեության յուրաքանչյուր դրսևորումը։ Հետևաբար, աշխատանքը, որն իր բնույթով «իսկական» մարդկային բովանդակություն ունի, պետք է դիտարկվի որպես մարդու առարկայական միջավայրի գեղագիտական կազմակերպման վճռորոշ գործոն։ Այս առումով անհրաժեշտ է անդրադառնալ աշխատանքի՝ որպես օբյեկտիվ ռեալության, նոր, սուբյեկտիվավորված ձևի սկզբնաղբյուրի, Մարքսյան ըմբռնմանը։

Մարքսյան փիլիսոփայությունը առաջին անգամ համակողմանիորեն ցույց տվեց, որ մարդու «զուտ» մարդկային կապը բնության հետ իրականացվում է աշխատանքային գործունեության շնորհիվ։ Ավելին, արտադրական գործունեությունը մարդու՝ որպես հասարակական էակի, գոյության հավերժական և բնական պայմանն է։ Միայն մշտապես փոխգործողությունների մեջ մտնելով բնության հետ, մարդն ապահովում է իր գոյությունը, քանի որ մարդու համար «բնությունը նրա մարմինն է, որի հետ մարդը պետք է, չմեռնելու համար,

---

[1] З. Г. Бегенау, Функция, форма, качество, М., 1969, с. 141.

մշտական շփման պրոցեսում մնա»[2]։ Բնության հետ փոխգործողության մեջ մտնելով՝ մարդն իր աշխատանքային գործունեության ընթացքում ակտիվորեն յուրացնում է բնական նյութը։ Դա բերում է բնական պրոցեսների, առարկաների էական փոխակերպմանը, որի ընթացքում միաժամանակ կատարելագործվում ու զարգանում է մարդը։ Մարդն իր գործունեությամբ որակապես ընդլայնում է բնության վրա ներազդելու իր հնարավորությունները. դա հանգեցնում է բնական՝ «կուսական» բնության և մարդու աշխատանքային գործունեության միջոցով «երկրորդ բնության»՝ մարդկայնացված բնության, տարբերակման անհրաժեշտությանը՝ վերջինս դիտելով որպես սուբյեկտիվ բովանդակությամբ հարստացած օբյեկտիվ ռեալության նոր ձև։

Նախամարքսյան փիլիսոփայական համակարգերում ավանդաբար ըստ ամենայնի հաշվի չէին առնվում շրջակա բնամիջավայրի նկատմամբ մարդու ակտիվ վերաբերմունքի, նրա պրակտիկ գործունեության հնարավորությունների որակական մակարդակներն ու մասշտաբները։ Օրինակ, մինչմարքսյան ողջ մատերիալիզմը բնությունը դիտում էր միայն օբյեկտի կամ հայեցողության ձևով՝ լիովին անտեսելով աշխատանքային գործունեության դերն ու նշանակությունը բնության վերափոխման գործում։ Միայն գերմանական դասական իդեալիզմը առաջին անգամ հիմնավորապես առաջ քաշեց բնության վերափոխման գործում սուբյեկտի ակտիվության դրույթը։ Այս առումով մեծ է Հեգելի դերն ու նշանակությունը, որը բացահայտեց այն իրողությունը, որ աշխատանքային գործունեության ներգործության շնորհիվ վերափոխված բնությունը կորցնում է իր նախկին տեսքն ու բնութագծերը, ձեռք է բերում իր բնական վիճակին ոչ ներհատուկ նոր որակ։ Այդպես տեղի է ունենում բնության «մարդկայնացումը», որն առարկայական բազմազանությունների միջոցով իր մեջ խտացնում է մարդու էութենական ուժերը։ Մատնանշելով նյութական-պրակտիկ գործունեության՝ բնության «մարդկայնացման» վճռորոշ գործոնի, դերը Հեգելն այդ գործունեությունն ու նրա առարկայացված արդյունքը վերագրում է բացառապես գիտակցության ոլորտին[3]։

Մատերիալիստական հիմքի վրա զարգացնելով Հեգելի գաղափարները՝ Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը եկան այն հետևության, որ օբյեկտիվ իրականության այդ հատուկ, սուբյեկտիվավորված բնագավառը ոչ թե գիտակցության (ինչպես պնդում էր Հեգելը), այլ աշխատանքի՝ մարդու նյութական-պրակտիկ գործունեության, արտաքին աշխարհում իր էութենական ուժերի առարկայացման արդյունքն է։ Հենց աշխատանքային գործունեությունն է, որ ստեղծում է այն առարկայական բազմազանությունը, որը նախկինում գոյություն չուներ բնության մեջ։ «Բնությունը,— նշում է Կ. Մարքսը,— ո՛չ մեքենաներ, ո՛չ լոկոմոտիվ, ո՛չ երկաթուղի, ո՛չ էլեկտրական հեռագիր, ո՛չ մանամեքենա և այլն չի կառուցում։ Այդ ամենը մարդկային աշխատանքի արդյունքն է, բնական այն նյութը, որը վերափոխվել է մարդկային կամքի օրգանի, որն իշխում է բնության կամ բնության մեջ մարդկային գործունեության վրա»[4]։ Դրա համար էլ մարդու արտադրական գործունեությունը նպաստում է այն բանին, որ բնությունն ավելի ու ավելի մեծ չափով «դառնում է նրա (մարդու) ստեղծագործությունը և նրա իրականությունը»[5]։

Աշխատանքի՝ որպես մարդու գիտակցված, նպատակադրված ու նպատակահարմար գործունեության, էության բացահայտումը հնարավորություն ընձեռեց տալու աշխատանքային պրոցեսի՝ որպես օբյեկտիվ պրոցեսի երկրորդ ձևի, համակողմանի բնութագիրը[6]։ Վ. Ի. Լենինը գտնում էր, որ աշխարհում

---

2 Կ. Մարքս, Ֆ. Էնգելս, Արվեստի մասին, հ. 1, Երևան, 1963, էջ 187։

3 Տե՛ս Гегель, Сочинения, т. 4, М., 1959, с. 107.

4 К. Маркс, Ф. Энгельс, Сочинения, т. 46, ч. 2, с. 215.

5 Կ. Մարքս, Ֆ. Էնգելս, Արվեստի մասին, հ. 1, էջ 188—189։

6 Աշխատանքի՝ որպես օբյեկտիվ պրոցեսի հատուկ ձևի, համակողմանի բնութագիրը տե՛ս С. С. Товмасян, Философские проблемы труда и техники, М., 1972.

իրար հետ գոյակցում են «օբյեկտիվ պրոցեսի 2 ձևերը՝ բնությունը (մեխանիկական և քիմիական) և մարդու նպատակադիր գործունեությունը»[7]։ Դրանով նա ցույց էր տալիս, որ օբյեկտիվ պրոցեսի առաջին ձևը, որը ստեղծման անսահմանորեն ծավալվող տարերային պրոցես է, մարդու՝ որպես հասարակական էակի, ձևավորումից սկսած լրացվում է օբյեկտիվ պրոցեսի երկրորդ ձևով՝ մարդու նպատակադիր գործունեությամբ։

Եվ այսպես, օբյեկտիվ պրոցեսի հատկապես երկրորդ ձևը բնական նյութը էական վերափոխման ենթարկելու ճանապարհով ստեղծում է ռեալության «սուբյեկտիվավորված» ձև, որը փիլիսոփայական գրականության մեջ հայտնի է «երկրորդ բնություն», «արհեստական միջավայր» անուններով։ Հարկ է նկատել, որ որպես աշխատանքային պրոցեսի անմիջական արդյունք, «երկրորդ բնությունը» ինքնածավալվելու, իր սահմանները որակապես ընդլայնելու մեծ հնարավորություններ ունի։ Մարդու՝ որպես հասարակական էակի, գոյության առաջնային պայմանը, առարկայական աշխարհի նյութական-զգայական վերափոխումն է։ Դա անսահմանորեն ինքնածավալվող պրոցես է։ Մարդն իր արտադրական գործունեությամբ կուսական բնությունից մշտապես նվաճում է նորանոր կենսատարածքներ՝ դրանով իսկ ընդլայնելով իր կողմից արարված «երկրորդ բնության» սահմանները։ Այսինքն՝ նյութական աշխարհի վերափոխման պրոցեսը անսահման ու անվերջ է և անընդհատ ուղեկցվում է «երկրորդ բնության» սահմանների ընդլայնմամբ, թեպետ «երկրորդ բնության» սահմանները կարող են մշտապես ավելի կամ պակաս պարզորոշությամբ երևալ։ Քանի որ աշխատանքի ոլորտն իր մեջ ներառում է բնությունն իր որոշակի սահմաններում, որոնք պայմանավորված են նյութական արտադրության, գիտության ու տեխնիկայի զարգացման պատմականորեն առկա մակարդակով, պետք է ընդունել այդ սահմանների հարաբերականությունը։ Չտեսնել «երկրորդ բնության» սահմանների այդ հարաբերականությունը, պայմանականությունը, նշանակում է հաշվի չառնել մարդու՝ որպես հասարակականորեն գործուն ու ակտիվ էակի, զարգացման, նրա էութենական ուժերի ինքնածավալման միտումներն ու օրինաչափությունները։ Դա նշանակում է անտեսել այն իրողությունը, որ մարդը «չի ձգտում մնալ ինչ-որ վերջնականապես սահմանված բան, այլ գտնվում է լինելիության բացարձակ շարժման մեջ»[8]։ Հետևաբար, աներկբայորեն պետք է ընդունել այն փաստը, որ ինչպես մարդկային իմացությունն ու պրակտիկ գործունեությունը սահման չունեն, այնպես էլ սահման չունի բնության «մարդկայնացման», «երկրորդ բնության» սահմանների ընդլայնման պրոցեսը։

Նկատենք, որ «մարդկայնացված» բնության սահմանների անընդհատ ընդլայնումը զգալիորեն բարդացնում է առարկայական միջավայրի գեղագիտական կազմակերպման խնդրի լուծումը։ Ավելին, առաջին հայացքից անհնար է գեղագիտորեն կազմակերպել այն, ինչն անընդհատ փոխվում, ընդլայնվում ու զարգանում է։ Սակայն այս տարակուսանքները վերանում են, երբ պարզվում է, որ գեղագիտական կազմակերպումը ոչ թե դրսից է ներմուծվում մարդկային գործունեության մեջ, այլ խորապես ներհատուկ է նրան, կազմում է նրա կառուցվածքային ամբողջության անհրաժեշտ տարրը։ Դրա համար էլ միջավայրը գեղագիտորեն կազմակերպելու խնդիրը չպետք է պատկերացնել միայն որպես հասարակության մեջ գործառող «երկրորդ բնության» առարկաների մեջ որոշակի կարգավորվածություն, համաձայնեցվածություն և ամբողջականություն մտցնելու խնդիր։

Մեր կարծիքով, միջավայրի գեղագիտական կազմակերպումը սերտաճած պետք է լինի մարդու նյութական-պրակտիկ գործունեությանը, բնության նյութական-զգայական յուրացմանը, պետք է հանդիսանա գեղեցկության օրենք-

---

7 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 29, էջ 205։

8 Կ. Մարքս, Ֆ. Էնգելս, Արվեստի մասին, հ. 1, էջ 215։

ների ու սկզբունքների հիման վրա կառուցված մարդկային գործունեության համակարգի անհրաժեշտ բաղադրամասը։ Մարդու առարկայական միջավայրի գեղագիտականացման գործում միայն այսպես է հնարավոր հասնել ակնառու արդյունքների։ Հակառակ պարագայում, եթե ապավինենք արդեն ստեղծված առարկաների ու իրային միջավայրի կարգավորմանն ուղղված միայն հատուկ միջոցառումների անցկացմանը կամ արվեստի օրենքների համաձայն այդ միջավայրի գեղագիտականացմանը, ապա կարելի է միայն առանձին տեղական նշանակության հարցեր լուծել։ Իսկ «մարդկայնացված» կենսատարածքի մի ահռելի հատված դուրս կմնա գեղագիտականացման ընդհանուր պրոցեսից։ Այլ կերպ ասած, «մարդկայնացված» կենսատարածքի գեղագիտականացմանը ուղղված գործողությունները կարող են ոչ միայն արդյունավետ չլինել, այլև, անշուշտ, ժամանակավոր բնույթ կկրեն։

Պատահական չէ, որ արդի դիզայնն այլևս չի ընկալվում որպես միջավայրի գեղագիտական կազմակերպման համապարփակ միջոց, որը բնութագրական էր մեր դարի 60-ական թվականներին։ Ներկայումս առաջ է քաշվում ինչ-որ հեռանկարային դիզայնի ստեղծման գաղափարը, որը պետք է դառնա ամբողջական համակարգերի նախագծման համընդհանուր միջոց և նպաստի մարդու ողջ առարկայական միջավայրի գեղագիտականացմանն ու հումանիզացմանը։ Դուցե, մոտ ապագայում ստեղծվի այդպիսի դիզայն, սակայն մենք ցանկանում ենք ընդգծել այն միտքը, որ ինչպիսի ամբողջական համակարգեր ու համալիրներ էլ նախագծվեն նման դիզայնի օգնությամբ և ինչպիսի գեղագիտական արժեքներ արմատավորվեն դիզայներական նախագծումների միջոցով, այնուամենայնիվ, դրանք մշտապես կվերաբերեն միայն առանձին տեղային միջավայրի ժամանակավոր գեղագիտական կազմակերպմանը։ Ինչ վերաբերում է առարկայական միջավայրի գեղագիտական կազմակերպման համապարփակ միջոցին (եթե «մարդկային կյանքի հավիտենական, բնական»[9] պայմանը կարելի է բնորոշել որպես միջոց), ապա մեր համոզմամբ այն իր բնույթով ու բովանդակությամբ «իսկական» մարդկային նյութական-պրակտիկ գործունեությունն է, որն իր մեջ օրգանապես ներառում է գեղագիտական նախասկիզբը ևս, որն իրականացվում է «նաև գեղեցկության օրենքներով»։

Դա նշանակում է, որ մարդկության առջև ծառացած է ոչ թե սոսկ առանձին տեղային միջավայրի, այլ բնության այն կենսահատվածի գեղագիտականացման խնդիրը, որը հանդես է գալիս «զգայական հավաստիության» ձևով (Կ. Մարքս)։ Այդ կենսատարածքն անընդհատ փոխակերպվում, ընդլայնվում ու կատարելագործվում է՝ արտահայտելով բնության նյութական վերափոխման պրոցեսի խորությունն ու անսահմանությունը և մեզ հետաքրքրող գեղագիտական առումով կարող է հանդես գալ երկու կտրվածքով։ Առաջինը կարելի է ներկայացնել «երկրորդ բնության» սահմանների ընդլայնման նմանակությամբ, այն է՝ մարդու արտադրական գործունեության ոլորտում ավելի ու ավելի մեծ քանակությամբ նոր առարկաների ու պրոցեսների ներդրվմամբ։ Երկրորդ կտրվածքը նախ և առաջ դրսևորվում է նրանում, որ գեղագիտորեն կազմակերպված միջավայրի սահմանների պատմականորեն անհրաժեշտ ընդլայնումն իրականացվում է նյութական-պրակտիկ գործունեության ներկայիս ձևերը «իսկական» մարդկային ձևերին աստիճանական մոտեցման համընթաց։ Որո՞նք են այդ «իսկական» մարդկային կենսագործունեության բնորոշ գծերը։ Ամենակարևորը մարդկային կենսագործունեության գիտակցական բնույթն է։ Կ. Մարքսը նշում է. «Գիտակցական կենսագործունեությունը մարդուն անմիջականորեն տարբերում է կենդանական կենսագործունեությունից։ Հենց միայն դրա հետևանքով նա տեսակային էակ է»[10]։

Մարդկային գործունեության գիտակցական բնույթը պայմանավորում է նաև դրա մյուս որակական բնութագծերը։ Դրանք են՝ առաջին. ի տարբերու-

9 Կ. Մարքս, Կապիտալ, հ. 1, Երևան, 1954, էջ 195։

10 Կ. Մարքս, Ֆ. Էնգելս, Արվեստի մասին, հ. 1, էջ 187—188։

թյուն կենդանիների, որոնք հայթայթում են տվյալ պահին անմիջականորեն իրենց կարիքը բավարարող առարկան, մարդն իր պահանջմունքների առումով ունիվերսալ էակ է։ Երկրորդ, ի հակադրություն կենդանիների, որոնք միայն ֆիզիկական պահանջմունքներ ունեն, մարդը ձգտում է հաղթահարել, որոշ իմաստով անգամ ազատվել դրանցից, քանի որ զուտ կենդանական պահանջմունքներից ազատ լինելն է «իսկական» մարդկային գոյության, կենսագործունեության կարևորագույն պայմանը։ Երրորդ, եթե կենդանին բնության սպառող է միայն, լիովին միաձուլված է բնությանը, դրանից իրեն չի կարող առանձնացնել, ապա մարդը ոչ միայն սպառում, այլև վերափոխում է բնությունը, իրեն ակտիվորեն ու ազատորեն հակադրում է բնությանը և իր կենսագործունեության արդյունքին։ Չորրորդ՝ «կենդանին նյութը ձևավորում է միայն այն տեսակի և չափանիշի պահանջմունքի համեմատ, որին ինքը պատկանում է, այն ժամանակ, երբ մարդը կարող է արտադրել ամեն տեսակի չափանիշով և նա ամենուրեք կարող է համապատասխան չափանիշ կիրառել առարկային։ Այդ բանի շնորհիվ մարդը նյութը ձևավորում է նաև ըստ գեղեցկության օրենքների»[11]։ Կ. Մարքսի այս խոսքերից հետևում է, որ ստեղծագործությունն (ըստ գեղեցկության օրենքների) ինչ-որ գերբնական, անբացատրելի ու խորհրդավոր, մարդկային գործունեության մեջ դրսից ներմուծվող երևույթ չէ, այլ աշխատանքային գործունեության՝ որպես մարդկային էության խտացված արտահայտության, օրգանական և անկապտելի մասն է։ Ընդսմին՝ այն պարտադիր պայմանով, որ չի հակասում նյութական աշխարհի օբյեկտիվ զարգացման օրինաչափություններին։

Դիտակցելով գեղեցկության ու չափի օրենքների անխզելի միասնության կարևորությունը, կարծում ենք, որ ցանկացած գործունեություն, որը ծավալվում է նյութական աշխարհի օբյեկտիվ օրենքներին լրիվ համապատասխան և իրականացվում է աշխատանքի առարկայի չափի համակողմանի իմացության հիմքի վրա, ստեղծագործական պրոցես է, որն իրագործվում է նաև ըստ գեղեցկության օրենքների, հետևապես պետք է նպաստի իրականության գեղագիտական կազմակերպմանը։ Կարող է թվալ, թե նման պնդումը չափազանցություն է, քանի որ իրականում մարդն հաճախ է բախվում իր աշխատանքի արդյունքների հետ, որոնք աշխատողի համար գեղագիտական արժեք չեն ներկայացնում։ Դրա հետ մեկտեղ հանրահայտ է, որ առանց տիրապետելու աշխատանքի առարկայի չափին մարդն անկարող է իրագործել անգամ ամենահասարակ արտադրական գործողությունները։ Հակառակ դեպքում աշխատանքի պրոցեսն էլ ավելի կդժվարանա, և այն անմիջական նպատակը, որը մարդուն մղում է դեպի կոնկրետ աշխատանքը, չի իրագործվի, այսինքն՝ մարդու բոլոր ջանքերն իզուր կանցնեն, իրենց ցանկալի արդյունքը չեն տա։ Դա նշանակում է, որ առաջադրված նպատակի կենսագործման համար անհրաժեշտ է խորապես ճանաչել բնության օրինաչափությունները։

Այս դատողությունները, կարծես, հերքում են աշխատանքի պրոցեսում վերափոխված առարկաների չափի ճանաչման բացարձակ նշանակությունը, որն ընկած է անհատի (ըստ գեղեցկության օրենքների) ստեղծագործական գործունեության հիմքում։ Բանն այն է, որ ստեղծագործական գործունեությունն (ըստ գեղեցկության օրենքների) օրգանապես կապված է ոչ միայն յուրաքանչյուր տեսակի չափի բացահայտման, այլև դրանցից յուրաքանչյուրում մարդու էութենական ուժերի չափի առարկայացման հետ։ Ստեղծագործությունը որոշվում է այդ չափերի միջև եղած ներդաշնակ հարաբերակցության հաստատմամբ։ Մեթոդաբանական առումով անհրաժեշտ է հաշվի առնել թե՛ բնության օբյեկտների վերափոխման չափը, թե՛ մարդու էութենական ուժերի առարկայացման չափը, քանի որ այդ կողմերից որևէ մեկի անտեսումն անհնար է դարձնում առարկայական միջավայրի կազմակերպումն ըստ գեղեցկության օրենքների։

11 Կ. Մարքս, Ֆ. Էնգելս, Արվեստի մասին, հ. 1, էջ 188։

Ն՝շակույթի պատմությունը ցույց է տալիս, որ բնության վերափոխման ընթացքում մարդկությանը միշտ չէ, որ հաջողվել է իր աշխատանքի առարկայի չափին հասնել, որը դիալեկտիկական փոխկապակցության մեջ է գտնվում ամբողջությամբ վերցրած բնական չափի հետ։ Ավելին, մարդուն ոչ միշտ է հաջողվել իրականում առարկայացնելու իր իսկական չափը, հասնելու իր էութենական ուժերի առավել համարժեք դրսևորմանը։ Այսպես, օրինակ, ձգտելով ակտիվորեն կենսագործել իր նպատակները, բավարարել իր ընթացիկ պահանջմունքները՝ մարդկությունը հաճախ էական վնաս է հասցրել բնությանը, խախտելով էկոլոգիական հավասարակշռությունը։ Ընդսմին, հատկանշականն այն է, որ իր արտադրական գործունեության ընթացքում խախտելով բնական չափը, մարդն իրեն զրկել է իր էութենական ուժերի առավել համարժեք, ստեղծագործական առումով հագեցված դրսևորման հնարավորություններից։ Դա նշանակում է, որ մարդը՝ որպես բնության բարձրագույն ստեղծագործություն, չպետք է իր էությունը, իր չափը հակադրի բնական չափին, էականորեն խախտի այն։ Ընդհակառակը, մարդու իսկական չափը՝ որպես «մարդ—հասարակություն—բնություն» համակարգի վճռորոշ տարր, պետք է օրգանական կապի մեջ գտնվի բնական չափի հետ։

Այսպիսով, արտադրության պրոցեսում աշխատանքի առարկաների չափի և մարդու չափի միջև եղած ներդաշնակ փոխկապակցությունը ստեղծագործական գործունեության հիմնարար նախադրյալն է։ Դա հավաստում է այն մասին, որ գեղագիտական արժեքների ստեղծումը, առարկայական միջավայրի գեղագիտական կազմակերպումն աշխատանքային գործունեության անկապտելի մասն է։

МАТЕРИАЛЬНО-ПРАКТИЧЕСКОЕ ОСВОЕНИЕ ДЕЙСТВИТЕЛЬНОСТИ И ЭСТЕТИЧЕСКАЯ ОРГАНИЗАЦИЯ ПРЕДМЕТНОЙ СРЕДЫ

СВЕТЛАНА АРЗУМАНЯН

Резюме

Современная эпоха характеризуется значительным расширением границ эстетического во всех областях человеческой жизнедеятельности. Эстетические мерки, эстетический критерий выдвигаются в число основных не только в сфере духовного, но и материального производства. Всё своё окружение человек хочет видеть не только полезным и целесообразным, но и организованным по законам красоты. Естественно, что особое внимание привлекает прежде всего проблема эстетической организации предметной среды.

Эстетическая организация как организация действительности по законам красоты осуществляется в процессе материально-практической деятельности человека. Она результат адекватного опредмечивания в действительности такой важнейшей имманентной характеристики подлинно человеческой деятельности, как умение творить «также и по законам красоты» (К. Маркс).